

## Արձանագրություն №3/2014-2015

«Երևանի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության  
գիտական խորհրդի՝ 2014թ. նոյեմբերի 18-ին տեղի ունեցած թիվ 3 նիստի

Նիստին ներկա էին գիտական խորհրդի 88 (ութսունութ) անդամներից 61-ը (վաթսունմեկ):  
Նիստը նախագահում էր ռեկտոր Ա. Հ. Սիմոնյանը:

Ռեկտոր Ա. Հ. Սիմոնյանը, բացելով գիտական խորհրդի նիստը, հայտարարեց քվեակազմի  
առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը.

1. **ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսի և թղթակից անդամի թափուր տեղերի համար ԵՊՀ-ի կողմից  
թեկնածությունների առաջադրման մասին** (Ձեկ.՝ պրոռեկտոր Գ. Գ. Գևորգյան):
2. **<<Երևանի պետական համալսարանի գնումների, մատակարարման և պահեստավորման  
բաժին>> կառուցվածքային ստորաբաժանումը լուծարելու, այդ բաժնի աշխատողների  
աշխատանքային պայմանագրերը լուծելու և <<Երևանի պետական համալսարանի  
գնումների պլանավորման և պահեստավորման վարչություն>> կառուցվածքային  
ստորաբաժանումը ստեղծելու մասին:** (Ձեկ.՝ ռեկտոր Ա. Հ. Սիմոնյան)

Գիտխորհրդի անդամների կողմից օրակարգի համար այլ հարց չառաջարկվեց և  
մասնակիցների բաց քվեարկությամբ ընդունվեց նիստի օրակարգը:

1. **Լսեցին.** – **ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսի և թղթակից անդամի թափուր տեղերի համար ԵՊՀ-ի  
կողմից թեկնածությունների առաջադրման մասին:** Պրոռեկտոր Գ. Գ. Գևորգյանը նշեց,  
որ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսի և թղթակից անդամի թափուր տեղերի համար ԵՊՀ-ի  
կողմից թեկնածությունների առաջադրման հարցերը քննարկվել են ԵՊՀ  
ֆակուլտետների գիտական խորհուրդներում և ըստ մասնագիտությունների  
ներկայացրեց հավակնորդներին

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսի թափուր տեղերի համար ԵՊՀ կառուցվածքային  
ստորաբաժանումները ներկայացրել են հետևյալ պրոֆեսորներին

1. Կոնդենսացված միջուկային ֆիզիկա – ԵՊՀ պինդ մարմնի ֆիզիկայի ամբիոնի վարիչ,  
ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պրոֆ. Ալբերտ Կիրակոսյան,
2. Լազերային ֆիզիկա - տեսական ֆիզիկայի ամբիոնի պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ,  
ֆիզմաթ. գիտությունների դոկտոր Գագիկ Կրյուչկյան,
3. Իրավագիտություն – ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի դեկան, ՀՀ ԳԱԱ թղթ.  
անդամ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գագիկ Ղազինյան  
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամի թափուր տեղերի համար ԵՊՀ կառուցվածքային  
ստորաբաժանումները ներկայացրել են հետևյալ պրոֆեսորներին

1. Լեզվաբանություն - անգլիական բանասիրության ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սեդա Գասպարյան
2. Գրականագիտություն - գրականության տեսության և գրաքննադատության ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ժենյա Քալանթարյան
3. Լազերային ֆիզիկա - ընդհանուր ֆիզիկայի և աստղաֆիզիկայի ամբիոնի վարիչ, ֆիզմաթ. գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ատոմ Մուրադյան
4. Մաթեմատիկա - ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետն առաջադրել է բարձրագույն մաթեմատիկայի ամբիոնի վարիչ, ֆիզմաթ. գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Մարտին Գրիգորյանի թեկնածությունը, իսկ մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետն առաջադրել է մաթեմատիկական անալիզի և ֆունկցիաների տեսության ամբիոնի վարիչ, ֆիզմաթ. գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հրաչիկ Հայրապետյանի թեկնածությունը,
5. Քիմիա - ԵՊՀ դեղագիտության և քիմիայի ֆակուլտետի դեկան, քիմիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Տարիել Ղոչիկյան,
6. Շրջակա միջավայրի ուսումնասիրություն - Էկոլոգիական քիմիայի ամբիոնի վարիչ, տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գևորգ Փիրուսյան:

Ռեկտոր Ա. Սիմոնյանն առաջարկեց բոլոր մասնագիտությունների գծով, որտեղ առաջադրված է մեկ թեկնածություն, անցկացնել բաց քվեարկություն: Առարկություններ չհնչեցին: Անցկացվեց բաց քվեարկություն և ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսի և թղթակից անդամի թափուր տեղերի համար ԵՊՀ-ի ստորաբաժանումների առաջադրած թեկնածուները միաձայն առաջադրվեցին համապատասխան մասնագիտություններով ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսի և թղթակից անդամի ընտրություններին մասնակցելու համար:

Ռադիոֆիզիկայի ֆակուլտետի դեկան Յուրի Վարդանյանի առաջարկով ֆիզիկայի ու մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետների դեկաններ Ռուլանդ Ավագյանն ու Արթուր Մահակյանը գիտխորհրդի անդամներին հակիրճ ներկայացրեցին թեկնածուների գիտական գործունեության ուղղություններն ու ծավալը: Նշված մասնագիտության գծով այլ առաջադրում չեղավ:

Ռեկտոր Ա. Հ. Սիմոնյանն առաջարկեց անցկացնել փակ, գաղտնի քվեարկություն: Կազմվեց հաշվիչ հանձնաժողով՝ հետևյալ կազմով

1. Ռուլանդ Ավագյան – ֆիզիկայի ֆակուլտետի դեկան (նախագահ)
2. Արթուր Մահակյան – մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի դեկան,
3. Մենուա Սողոմոնյան – ԵՊՀ գիտքարտուղար

Անցկացվեց քվեարկություն՝ հետևյալ արդյունքներով

Մարտին Գրիգորյան Կողմ – 52, Դեմ – 5, Անվավեր – 4

Հրաչիկ Հայրապետյան Կողմ – 29, Դեմ – 26, Անվավեր - 6

**Որոշեցին.** – Անցկացված փակ, գաղտնի քվեարկության արդյունքների հիման վրա ԵՊՀ բարձրագույն մաթեմատիկայի ամբիոնի վարիչ, ֆիզմաթ. գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Մարտին Գրիգորյանի թեկնածությունն առաջադրել «Մաթեմատիկա» մասնագիտությամբ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամի թափուր տեղի համար:

2. Լսեցին - «Երևանի պետական համալսարանի գնումների, մատակարարման և պահեստավորման բաժին» կառուցվածքային ստորաբաժանումը լուծարելու, այդ բաժնի աշխատողների աշխատանքային պայմանագրերը լուծելու և «Երևանի պետական համալսարանի գնումների պլանավորման և պահեստավորման վարչություն» կառուցվածքային ստորաբաժանումը ստեղծելու մասին: Ռեկտոր Ա. Միմոնյանը առաջարկվող փոփոխությունները հիմնավորեց ԵՊՀ-ում գնումների գործընթացը բարելավելու, պլանավորման կազմակերպման մակարդակը բարձրացնելու նկատառումներով:

**Որոշեցին.** – 1. Լուծարել «Երևանի պետական համալսարանի գնումների, մատակարարման և պահեստավորման բաժին» կառուցվածքային ստորաբաժանումը և լուծարել այդ բաժնի աշխատողների աշխատանքային պայմանագրերը:  
2. Ստեղծել «Երևանի պետական համալսարանի գնումների պլանավորման և պահեստավորման վարչություն» կառուցվածքային ստորաբաժանումը:

ԵՊՀ գիտական խորհրդի նախագահ՝

Ա. Հ. Միմոնյան

Գիտական խորհրդի քարտուղար՝

Մ. Ա. Սողոմոնյան

21.11.2014թ.